

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱՐՇԱԼՈՅՍ ԵՒ ԱՐԵՒԵԼԷ

ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

(Շար. տես էջ 150)

ԵՐԿՐՈՐԻ Հնարք Լուսաւորչին՝ քրիստոնէական հոգին ժողովրդեան հոգւոյ մէջ ծաւալելու՝ եթէ՛ քարոզութեամբ և եթէ՛ վարուց լուս օրինակաւ, եղաւ Վանական կամ կրօնադասական կեանք հաստատել, թէ միաբանակեցաց և թէ միայնակեցաց. և այսպիսի կենաց թէ և կային հետք ի Հայո, ինչպէս առաջ յիշած եմք, այլ նուազ, և աւելի ճգնաւորական կերպով, իւրաքանչիւր ոք ինքն իր հոգին, քան զօրիշը հոգաւով: Ասոնցմէ աւելի բան պահանջէր նորադարձ Հայոց պէտքն, զոր նախատեսութեամբ հոգաց Գրիգոր՝ իր ձեռնադրուելու երթալու ատենէն, և տեղէն. ուսկից որ՝ « Երեսօր ի Կեսարիայէ (Կ'ըսէ Զենովր), « մնալք ժամանակս ինչ ի Սերաստիոյ հաւաքէ առ ինքն գրաստ կրօնադասաց »:

Ասոնց զլուսաւորչն էին մեր եկեղեցւոյ երկու տոնելի և հռչակեալ սուրբ ճգնաւորք, Աւետոն և Կրօնիդես, զորս ի Կեսարիոյ գողցաւ, և անոնց աշակերտն Խայիթան, 40 աշակերտներով ասոնք տեղաւորեց ի Տարսոն, ուր Հեթանոսական կրօնքն շատ արմատացեր էր, ի Հնդկոց զաղթեալ Գեմատիի և Գրիանէի Հետաւորք և յալորդք: Ասոնց քուրմն շատ յամանեցան գէնջով և պատերազմով. բայց աւելի ի պաշտպանութիւն իրենց կողմ քան անձանց: Իրենց զլիսաւոր կրօնատանց և քրմաբանաց տեղիքն ինճակեան և Յաշտիլատ՝ եղան կրօնաւորոց այլ զլիսաւոր վանսրայք,

միանգամայն և վարժարանք և համալսարանք իմն հասարակաց ազգին, կամ տնկարանք, ուստի այլեւայլ կողմեր պիտի տարուէին նորատունկէ՝ կենաց զբախտներ բանալու: « Բազում և անհամար գունդս Վանայ « կանաց, կ'ըսէ Ագաթանգ. (ՃԻԱ), ի չէն « և յանէնս դաշտականս, շինակեացս և « լեռնակեացս, անձամուտս և արգելաւ « կանս հաստատէր »: Թէպէտ քիչ մի ճապաղ են պատմելիս խօսքն՝ այլ յայտնէ վերոյիշեալ տեսակ կրօնաւորաց վիճակ. միայն թէ շինակեաց բուսածներն՝ որ գեղ և մարդաբնակ տեղ եղող վանականներ նշանակէ, ամփոփելու է. վասն զի աւելի շինից մօտ քան շինից մէջ տեղաւոր հաստատուէին վանսրայք. և դայս յատկապէս յիշեցուց Ս. Ղեւոնդիոս իր ձեռնադրած հայրապետին մերոյ, զրելով. « Մի ոք ի դաստակերսս « կամ ի գիւղաքաղաքս՝ զօրէն Աղեքսան « դրացւոց (Եգիպտացւոց) գործեացէ, շինել « լով իւրաքանչիւր ումիք խրճիթս՝ զտէրու « նման տաճարաւն և առանձինն բնակել. « այլ ժողովեացես ի մի տեղ հարիւր (կամ « 400) արանց շափ, և որդեացես նոցա գեօքս « և աւառս մեծամեծս. որպէս զի պէտք վա « նացն ի նոցանէ վճարեացի. և ինքեանք « միայն աղօթից և ճգնութեանց պարապես « ցին »: Թէ և ժողովրդեան հետ շատ վերաբերութիւն չունէին այս տեսակ կրօնաւորք, բայց ժողովուրդն անոնց աղօթքն և ճգնութիւնը մեծ օգուտ համարէր. Տրդատ այլ՝ ըստ խրատու Կեսարիոյ Հայրապետին՝ անոնց գեղեր, աւաններ սահմանէր, իրենց ապուստոս ճարելու՝ անոնց բնակեաց տուրքերով: Լուսաւորչին այլ սիրելի էր ասոնց կեանքը. և շատ հեղ փախուստ տալով յարքունեաց և ի Հայրապետանոցէն, « Առեալ՝ « զմօտնս ոմանս յաշակերտացն՝ իւրաքան « չիւր մենաստանաց, երթեալ լեռնակեաց « մենակեաց տորամուտ ծակախիթ եղեալ... « աւառս քաղցումս յանապատ տեղին, յա « կուսն Եփրատական գետոյն... բնակեալ « ինն »: Այս վանորէից զլիսաւոր տեսուչ դրաւ Լուսաւորիչ, ինչպէս յիշեցինք, Գրիանէլ

1. Զենովր:

2. Ագաթանգէլոս ՃԻԱ:

ասորին, որ յետ շատ տարիներու՝ Տրդատայ անարժան թոռան Տիրանայ կըրից զոհ եղաւ: — Որչափ այլ առանձնակեաց վանականք ժողովրդեան հասարակ հոգեղ չէին՝ ըսինք, սակայն անոնց յանձնուած էր ճամբորդները, պանդուխտները, կարօտները հոգալու. ասոր համար յետոյ Մեծն Ներսէս աւելի շատցուց այսպիսի վանքեր, մանաւանդ դժուար և վտանգաւոր ճամբաներու քովերը, աւելցընելով նա և անոնց տպրուտոր:

ԺԵ.

Ուխտ եւ Գասակարգութիւն Եկեղեցւոյ:

ԵՐԱՐՈՐԿ Ընարքն՝ որ և ըստ պատուոյ և իշխանութեան՝ առաջին, էր կարգաւորութիւնն նորընծայ քրիստոնէութեան Հայոց, անոնց հոգեւոր հովիւներ և հովուապետներ զնել, կամ եկեղեցականաց գասակարգութիւն, որոց զլուսին կամ բարձրագոյն ստորճանաւորն է Եպիսկոպոսն: Եթէ եկեղեցւոյ ստորին պաշտօնեայք այլ չկային կամ շատ քիչ գտնուէին այն ատեն ի Հայաստան, յայտ է թէ և ոչ կամ հազիւ քանի մի ընդ եպիսկոպոսք. և հարկ էր որ Լուսաւորիչն Հայոց իր ընդարձակ վիճակին համար բաղմաթիւ այլ եպիսկոպոս գտներ և կարգեր: Նոյնպէս և հարկ էր որ ի սկզբան՝ ինչպէս ուսուցիչ և կրօնաւոր՝ զուրսէն բերու, այսպէս և եպիսկոպոսներ, որք՝ տեսութեամբ մի աւելի եւս կարեւոր էին՝ իր ընդհանրական ծանր պաշտօնը թեթեւցընելու համար. և զայս այլ մեծ խնամքով և ճարտարութեամբ հոգաց, հրաւիրելով ի դրացի աշխարհաց՝ ուր որ յուսար այն տեղաց եպիսկոպոսները շարժել և բերել: Իր մէկ հրաւիրական թըղթին մէջ գրէ, թէ Հայաստան 640 գաւառ է, ամենքն այլ կարօտին հովուաց. կրնայ չափազանց կամ սխալ ըլլալ այդ թիւն, մանաւանդ Խորենացւոյ աշխարհագրութեան մէջ շարուած Մեծ Հայոց գաւառները համարելով, որք հազիւ թէ 200 մի ըլլան. սակայն, նախ, այն ատենուան Լուսաւորչի վիճակին ընդարձակութիւնն՝ թերեւս այդ 200 գաւա-

ռաց անդին այլ կ'անցնէր, և երկրորդ, Խորենացւոյ յիշեալ գաւառներն՝ աւելի մանր բաժանմունքներ այլ ունէին. յիշեցնեմ տեղ մի յԱգաթանգեղոսէ թագաւորին տէրութեան սահմաններն. նոյն ինքն սրիշ տեղ (գլ. ձի) Լուսաւորչի վիճակին և քարաղութեան սահմաններն աւելի կ'ընդարձակէ. թողլով զմիջնաշխարհն՝ կ'ըսէ. « Քերէր առ « սահմանօքն Ասորաց, առ Նորչիրական « երկրուն և առ Կորդօք մինչեւ յամուր « երկիրն Մարաց, մինչեւ առ տամբն Մահ. « քրտան իշխանին, մինչեւ Աարպատական », ասանք Ասորեստանի և Հայաստանի միջոց, Որմեայ ծովուն հարաւային և արեւելեան կողմերն և Աարպատականի մէկ մասն են. այս յետին երկրին (Աարպատականի) աւելի արեւելեան մասին՝ Արտաշիլ քաղաքի եպիսկոպոսն այլ՝ ըստ Յայտմաւորաց՝ ի Լուսաւորչէ ձեռնադրուած է:

Դարձեալ, Ագաթանգեղի ուրիշ տեղ ըսածէն երեւի, որ Աարպատականին հիւսիսէն վեր և հին Աղուանից երկրէն աւելի դէպ ի հիւսիս՝ մինչեւ Դարբանտայ և Ալանաց զըռներն՝ հասնէր Լուսաւորչի հովուական խնամքն. անկից այլ դէպ յարեւմուտ՝ ի սահմանս Վրաց: Ըստ մեր պատմըլաց նորագործ Վրաց այլ (ի ձեռն Ս. Նունէի) ձգուէր մեր Հօր հովանին. բայց Վիրք և հին եկեղեցապատուհը կ'ըսեն, թէ իրենց թագաւորն ի Կոստանդիանոսէ խնդրած ըլլայ իր երկրին քարոզիչ խաւրել. բայց եթէ իրենց դարձն առաջ էր քան զկայսերն, յարմար է որ նախ մեր Լուսաւորչէն և Տրդատէն խնդրած ըլլան. և մինչեւ ի սկիզբն է դարու (Հայոց և Վրաց բաժանման իրենց Կիրիոն և մեր Արարհամ կաթողիկոսաց ատեն կրօնական խնդրոց պատճառաւ), եթէ ոչ գերիշխանութիւն այլ գերակայութիւն մի երեւեալ Հայոց կաթողիկոսին ի վերայ Վրացն, և ինչպէս Կիրիոն ի նախորդէն Արարհամու՝ ի Մովսէս կաթողիկոսէ՝ առաւ ձեռնադրութիւն, հաւանական է որ իր նախորդքն այլ Հայոց նախորդ կաթողիկոսներէն, ինչպէս և Աղուանից կաթողիկոսը, իայց Կալէրորդ համարիմ այս բանս մտնր քննել. բաւական է Լուսաւորչի համար Ագաթանգեղոսի գծած վիճակն:

Հաստ հաւանական է որ Գրիգոր իր 30 և աւելի տարի քահանայապետութեան առնէն իր վիճակին ամէն զաւառաց եպիսկոպոս կամ քորեպիսկոպոս հասուցած ըլլայ, այն գործը եկեղեցեաց սովորութեան համեմատ, որք բազմաթիւ . ստորակարգեալ եպիսկոպոսներ ունէին . զըրբէն թերածներէն զատ՝ ինքն ձեռնադրած է, ըստ իր պատմըին (Ագաթ .) . « Աւելի քան 400 եպիսկոպոս, որք կային « տեսուչ տեղեաց տեղեաց . իսկ զկարգու ե- « րիցանց և կամ սարկաւազաց կամ անա- « ցանոսաց, և որ այլ եւս ի պաշտօն Ա- « տուծոյ կային, անթիւ էին ի բազմութե- « նէ » : Եթէ և ոչ միաժամանակ գտնուէին 400 եպիսկոպոսք ձեռնադրեալք ի Լուսա- « ւորէն, այլ և յաւրդարար, սակայն ընդ- « ունելի է՝ թէ և միաժամանակ հարիւրաւորք գտնուած ըլլան . Յունաց վիճակագրութեանց մէջ այլ յիշուին մէկ նահանգի կամ միարա- « պոյսութեան մէջ ինչուան 30 կամ 40 ե- « պիսկոպոսք . և նոյն իսկ Հայոց քանի մի նա- « հանգաց մէջ՝ որք ի Ե, Զ դարս Բիւզան- « դոյ կայսերութեան ներքեւ էին, յիշուին այդպէս բազմաթիւ եպիսկոպոսք՝ հայկական տեղեաց անուամբք, որոց ոմանք չեն յիշուի ի մեր պատմաց : Զարմանայի այս է, որ թէ և այդ մեր պատմաց բաժնեւն այլ վկային բազմութեան Հայ եպիսկոպոսաց, այլ և ոչ մէկն 40է կամ 50է աւելի միաժամանակ ե- « պիսկոպոսաց անուաները չէ շարած, թէ ժո- « զովոց մէջ թէ ուրիշ առթիւ . հաւանորէն՝ ա- «ւելի գրուածքն կամ հին թիմագրութիւնքն կորած են, և միայն ԺԶ-ԺԷ դարուց մէջ գրուածքն յիշուին կամ մնան . ինչպէս Ոսկան վարդապետին, 200ին չափ : Քայց նոյն իսկ մեր պատմըաց ի Դ դարէ մինչեւ ի ԺԷ, աստ անդ պատահաբար յիշեալ եպիսկոպո- « սական թեմից անուանք կ'ոնջնին քան 400 թիւ, միանգամայն թէ՛ զաւառաց, թէ՛ քա- « զաքաց, թէ՛ վանորէից, և թէ իշխանութեանց կամ նախարարութեանց . վասն զի թէ՛ քա- « զաքական թէ՛ եկեղեցական տեսութեամբք՝

կային զաւառք՝ որք գոնէ երկու եպիսկոպոս ունէին, հին դարերում . ինչպէս նոյն իսկ Լուսաւորչի ստեին Տարօն զաւառն աշխար- « հագործէն ունէր իր եպիսկոպոսը, նոյն զա- «ւառին տէրն՝ Մամիկոնեան իշխանն՝ ունէր յատուկ եպիսկոպոս . և ահա երկու Արորի եղբարքն Զենթիք և Եղիազար՝՝ այդ զաւա- « րին զիտաւոր վանաց թեմերուն եպիսկոպոսք էին . նոյնպէս և Մէծին Ներսիսի տանն, մինչ երրորդ եպիսկոպոս կամ քորեպիսկոպոս մ'այլ կար ի Յաշտիւատ . այն կողմերն էր և Դա- « նիէյ ստորին : ԺԱ դարու պատմիչք և զրիչք մեր եւս յիշեն իրրեւ իրենց ներկայ ժամա- « նակին 500 թեմակալ եպիսկոպոս . յորոց գէթ զոմանս հարկ է քորեպիսկոպոս համարիլ :

Յայտ է ի կարգաց եկեղեցւոյ որ այդ Գործ եպիսկոպոս կոչուածքն՝ աւանաց և գիւղից եպիսկոպոսք էին՝ քաղաքացի եպիսկոպոսին իշխանութեան ներքեւ : Մեր պատմութեան մէջ շատ չեն յիշուի, բայց կան յիշուած ԺԱ դարու մէջ, ինչպէս Արծն աւանին քոր- « եպիսկոպոսն . ինչուան ԺԳ և ԺԴ դարուց մէջ եւս յիշուած են : Այս տարբերութեան զատ՝ թէ՛ եկեղեցական թէ՛ քաղաքական տե- « սութեամբ՝ սասիճանք կային եպիսկոպոսաց, բարձրագոյն և ստորին . և ինչպէս ուրիշ աշ- « խարհաց մէջ՝ հարկ էր այդպէս ըլլալ և ի Հայս, որոց նախորարք և իշխանք շատ վրէժմնորէր էին իրենց իրաւանց և դատա- «ւորութեանց . և ինչպէս աշխարհական իշխա- « նոց բարձր և ցած, կամ առաջին, երկրորդ և այլն, դատակարգ կար՝ թագաւորական օ- «րինքը սահմանեալ և փոփոխեալ, և երբեմն պատուոյ և երբեմն պատժոյ համար վերի- « վայրեալ, այսպէս և եպիսկոպոսաց դատա- « կարգն՝ ըստ նախապատուութեանց իշխա- « նաց և տեղեաց . վասն զի կան եպիսկոպոսք որք յանուն նահանգաց կամ աշխարհաց կոչուին, և ըստ այնմ և բարձրապատիւք . ինչպէս Արարատաց, Սիւննաց որ 12 եպիս- « կոպոս ունէր ընդ ձեռամբ : Ողջնեաց, և այլն : Զատ ասկէ՛ նա և իրրեւ պաշտօնեայք կա-

1. Առաքելոց վանաց Սահմանադիրն՝ հօն և եռնադրուած Կ'ըսէ Ղլաշար (Եղիազար) . բայց Զենթիք՝ առաջնաց Նիւստրացւոց եպիս-

կոպոս ցուցնէ զնա և Ս. Գրիգորի հետ ի Հոգմ գնացող և ի դարձին հաստատուած յԱռաքելոց վանս :

թողիկոսին և եկեղեցւոյ տեսուչը պիտոյից կամ վարչութեան ալիւսալ՝ կային գլխաւոր եպիսկոպոսը, նոյն իսկ Լուսաւորչի և Մեծին Դերսիսի ատենէն. մանաւանդ առաջին դարերում աւելի որոշ, հաստատ և շատ էին այսպէս զանազանեալ դասքն և պաշտօնեայք։ Ուխտանէս պատմիչ (ԺԱ գարու) այս յիշեալ Ս. Հայրապետներէն կարգեալ և դասաւորեալ կ'ըսէ 30 բարձրապատիւ եպիսկոպոս, յանուն ցեղից կամ տեղեաց կամ թաղաւորութեան մեծամեծ պաշտօնից, Արքեպիսկոպոս կամ Արքեպիսկոպոսներ կոչելով, որք ի ժողովս կամ որ և է հանդիսական գումարմանց ատեն՝ քան զայլ եպիսկոպոս վերագոյն բազմէին՝ մօտ ի կաթողիկոսն. իսկ Որպէրեանն Ստեփանոս պատմիչ Սիւնեաց՝ 36 եպիսկոպոս կ'ըսէ, ոսկեկար քարձերու վրայ նստող, իրբեւ դահակիցք Հայրապետին։

Այս եպիսկոպոսաց մէջ, ինչպէս և ժողովոց մէջ յիշուածներէն կ'երեւի՝ որ առաջնակարգն էր Հարքաց եպիսկոպոսն, կամ Հայոց նահապետի՝ Հայկոյ՝ բնիկ ոստանն ըլլալուն համար, կամ (որ նոյն պատճառաւ թուի) Լուսաւորչէն ձեռնարուած 12 քրմորդի եպիսկոպոսաց առաջնոյն տրուած աթոռն ըլլալուն, որոյ աթոռակալն եղաւ Ալիքանես, անշուշտ հեթանոսական անունը փոխուած. և զոր իրբեւ նախակարգ ամենայն եպիսկոպոսաց իր յաջորդելի որդւոյ Արիստակիսի հետ՝ ուղեկից ըրաւ Ս. Գրիգոր ի Հոռով երթալուն և դառնալուն. գուցէ քրմապետի կամ մեծիշխան մէկու մի որդի էր ։ Աորպէս տառնումէկ ընկերաց շատն այլ հիթանոսական անուններն թողած՝ քրիստոնէական առած են. ինչպէս Եօքաթիոս, « որ ի կողմանս « վայրացն Բառենայ կացեալ լինէր Հովիւ » . Բասոս, Մովսէս, Էւսեբիոս, Յովնանէս, Ագապիս, Անտիոքիս, Կիւրակոս, միայն երեքն հայաւունք են, (Թողով յունական է մասնիկն) . Արտիմ, Արտակ և Տիրիկ, եթէ ասոնք այլ ծամակած չեն, Ասոնց առաջինն իրբեւ յատուկ տեղակալ կամ իր փոխանորդ դրուած ցուցնէ Լուսաւորչին, իր՝ որ և է պատճառաւ՝ հայրապետական աթոռն հեռացած ատեն. « զԱլիքանես » զայր ճշմարիտ « և աստուածասէր » վերակացու թողոյր ար-

« քունական դրանն բանակին » . կ'ըսէ պատմիչն (Ագաթ. ԺԺԱ), Թուի թէ ասկէ զատ ինչպէս յաջորդ կաթողիկոսը՝ ունէր և Լուսաւորչի իր Դրան եպիսկոպոսն. կային և արքունի Դրան և զիսաւոր իշխանաց և նախարարաց Դրան եպիսկոպոսը, Արիստակոս մեծապատուութիւնն յայտնուի իր ցեղին կամ ընտանեաց յաջորդներուն այլ եկեղեցական բարձրագոյն պատուոյ և աստիճանի հասնելէն. վասն զի երբ Լուսաւորչի որդւոց և թուանց յաջորդութեան ընդհատութիւն եղաւ յետ Գուսպան և Ներսիսի, Ալիքանես զաւկընէրէն կարգեցան Հայրապետք, Փառնէ, Սահակ, և յետոյ Յուսիկ, Զառն և Աւստրակիս։

Ասոնք են յիշեալ քրմորդի եպիսկոպոսք. թերեւ և զիսաւորքն և արքանկիցք քահանայապետին. այլ Մեծն Ներսէս նորոգող կարգաց իր ջով պապուն՝ սահմանիւ էր իրեն 12 արքանկից, խորհրդակից և գործակից, (Բուզանդ Զ. Ե) . և զուցէ զասոնք նշանակէ և Ագաթանգեղ՝ ըսելով վասն Լուսաւորչի (ԺԺԳ), « Բըստակիսաւն և ամենայն երեսէն « յի օգնակաւորք՝ զաշակերտելովքն շրջէր և « Հաստատէր զնոսա » . — Վերջի յիշատակս յայտնի կ'ընէ, որ Արիստակէս իր հետաւոր ձգնարանէն եկած ատենէն ի վեր ի Հայս, Տրդատայ ստիպմամբ քան Գրիգորի՝ ձեռնադրուելով հօրմէն եպիսկոպոս՝ միանգամայն և իրեն յաջորդ ոահմանեցաւ և միւս տմեն եպիսկոպոսներէ վեր, և իբր ժառանգ Հայրապետութեան ճանաչուէր. այլ թէ ինչ յատուկ պատուանումամբ, չի յիշուիր . իսկ հայրն՝ Լուսաւորչին մեր, ամենայն պատուոյ արժանաւոր՝ վայելուչ էր որ Եպիսկոպոսապետ Հայոց կոչուէր. թէ և կարողիկոս և հայրապետ եւս կոչուած է, նա և մեծ արքեպիսկոպոս Ագաթանգեղոսէ (ԺԺԳ) . բայց պատուանունք իրմէ վերջը որոշուեցան յեկեղեցիս, և Թարգմանիչք հին գրոց (ընդ որս և Ագաթանգեղոսին) իրենց ժամանակին սովորութեամբ և օրինօք այդպէս կամ այնպէս կոչեն. մեծ և փոքր յառաջին դարս՝ հասարակօրէն սոսկ եպիսկոպոս կոչուէին, և զգլխաւոր կամ մեծ, և ասոնց նման անուամբք որոշուէին ազգի կամ աշխարհի կամ մեծ գաւառաց եպիսկոպոսներն. Ասանկ համե-

մատական պատուոյ անուամբ մի միայն դա-
նազանէին առհասարակ քանակաւորքն կամ ե-
րիցոնք, և զի ի սկզբան յոյն և ասորի քա-
հանաք շատ էին քան զՀայս, անոնց լեզուա-
այլ կոչուէին ի մերայոց թէ քահանայն և
թէ ստորին աստիճանին պաշտօնեայք եկե-
ղեցւոյ: Ինչպէս քիչ առաջ լսեցինք յԱգա-
թանդեղոսէ՝ անագանոս կոչուիլն զբարկա-
ղացի կամ ընթերցողի: Եւ ինչպէս բարձրա-
գոյն աստիճանաւորն ինչուան Հիմոյ այլ մեր
մէջ (նա և ստարաց) յոյն բառով՝ եպիսկո-
պոս կոչուի, փոխանակ թարգմանելու Տեսուչ
կամ Վերատեսուչ ըսելու, և ըստ ոմանց Դեո
կամ Դիտապետ: Եկեղեցական կարգաց, առ-
տինանաց և խորհրդոց վրայ զրոյ նստինիք
մեր, սկսեալ ի Ս. Սահակոյ մինչեւ Երե-
նազկուն կամ Գառնատանագիրն Մխիթար
Գոչ և այլք յառաջ քան զսա և յետք, և
մանաւանդ անոր ժամանակակիցն Ս. Դերս.
Լամբրոնացի (ի Մեկնութեան Պատարագի)
բարձրայտեր են այս բաներս, և աւելորդ հա-
մարիմ յիշել, զի որչափ մեր քրիստոնէոս-
թեան Արշալուսոյ յառուկ գիտելիք կամ նոր
բան մի չեն: Ասոնց հետ իմանալու և թող-
լու է որ և է եկեղեցւոյ կարգաց, զրոց,
ծիրից, և այլն, խնդիրներ, որ եկեղեցական
հաստատութեան վերաբերին, և որք յայտ
է թէ այնպիսիք էին՝ որպիսիք զանոնք կա-
տարող նախին պաշտօնեայքն, այսինքն յու-
նականք կամ՝ ասորականք. և մինչև այսօր
մեր Պատարագամատոյցն, Օրմնադրին գիրքն
կամ Մաշտոց, մեծաւ մասամբ ի Յունաց
առնուած են, մասն ինչ և յԱսորաց, որպէս
ի Ս. Եփրեմէ: Եւ եթէ յանուն Ս. Սահա-
կոյ և Ս. Լուսաւորչի Պատարագամատոյցք
այլ յիշուին նոքա եւս կամ բոլոր կամ մեծաւ
մասամբ այդ օտարաց նմանք կամ նոյնք են¹:

Այս առթիւ յիշենք, որ մեզի ծանօթ Յա-
նայապետաւմ² կոչուած զրքէն զատ՝ Լուսա-
ւորչի անուամբ հայերէն գրուած չի գտուիր,

բայց անվաւեր Տեսիլք կամ Հրեշտակի Հետ
խօսակցութիւն. սակայն եթովպացի և արա-
բացի (կարծեմ թէ և զիտի) Հին ձեռա-
գրոց մէջ գտուին իր անուամբ վարդապե-
տական բանք. Ագաթանդեղոսի մէջ եղածէն,
Յանայապետամէն, թէ ուրիշ գրուած է
անուամբ, զեռ ստուգուած չէ. իսկ իր վարքն,
ինչպէս և ասոնն՝ թէ այդ յիշեալ ազգաց և
թէ այլոց, յորս յայտնի են Ասորացն, Յու-
նաց և Լատինաց, գառնին իրենց Յայտա-
ւարաց և Տօնացոցից՝ մէջ: Այս ամենն վկայեն
թէ մեր Լուսաւորչին ինչ մեծ և Հին համ-
բաւ ունեցիր է, զոր կրնամք ըսել համաշ-
խարհական. և թէ, այն՝ որ այսպէս յետ
մահուանն հոգակուեր է, նա և ի կենդանու-
թեանն ունեցիր է անոնց շատին հետ որ
և է կերպիւ վերաբերութիւն կամ ծանօթու-
թիւն մի. որուն արգին հաւաստիք տեսանք
այլեւայլ զաւաններէ և թեմերէ օտարա-
լեզու եկեղեցականներ և վարդապետներ բե-
րին ի Հայս: Այս ծանօթութիւնն և համբաւ
Լուսաւորչին անտարակոյս աւելի հոգակեցաւ
առթիւ Դիկիայ Ա ժողովոյն. որ և կարեւոր
գեպք մի ըլլալով մեր ազգին քրիստոնէու-
թեան արեղծանախապայտութեան, վայելէ որ քիչ
մի կանգ առնուք այս կէտիս վրայ, տաանց
աստուածաբանական և եկեղեցական խնդրոց
մէջ մտնելու, թեթեւակի շօտափելով զպատմա-
կանն. հասարակաց ծանօթ ըլլալով՝ որ այդ
առաջին տիեզերական սիւնհոգնախն (ժողով)
զիսուար պատճառն էր՝ Աղեքսանդրիոյ Ա-
րիտա երեցուն անտանելի Հայհոգական մուր
վարդապետութիւնն, զՅիսուս Քրիստոս սոսկ
մարդ ըսելով և ոչ միացեալ ընդ Բանին Աս-
տուծոյ՝ Աստուած և մարդ. մէկ մ'այլ խըն-
դիրն Զատկի տօնին օրուան և եկեղեցա-
կան վիճակաց կամ աթոռաց կարգաւորու-
թիւնքն:

Շարայարեղի Է. Դ. Վ. Մ. ԱԼԻՇԱՆ

1. Ասոնց վրայօք տեղեկանալ փափագողն
կընայ՝ զատ յայլոց զանեւ ճոխաբար և լու-
քնանութեամբ գրուած գիրքը Գաթըրճեան Է.
Յովսէփ վարդապետի վերինալ Մխիթարեանց,
Սրբազան Պատարագամատոյցք Հայոց անուա-

նեալ, և տպագրեալ հոն յամին 1897:
2. Տեղեւոյ պատճառ չեմ համարիր քննելն,
թէ որքան ստույգ կամ հեռանկան գրուած
է աս մեր Լուսաւորչին: